ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Բովանդակություն

Առաջաբան 3

1. Տարեկան կատարողականի նկարագիրը 4

2. ԱՃԹՆ-ի իրականացումը 2020թ.-ին Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ և ռազմական դրությունների պայմաններում 17

3. Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման ընթացքի ուժեղ և թույլ կողմերը 19

4. ԱՃԹՆ-ի 2020թ. աշխատանքային ծրագրի կատարողականը և ներդրման ծախսերը 23

5. Հաշվետու ժամանակահատվածում բազմաշահառու խմբում անդամակցության մանրամասներ 41

Առաջաբան

2020 թվականը Հայաստանի Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) համար բարդ ու նշանակալից տարի էր: Այն, մի կողմից, բնութագրվեց Հայաստանի՝ ԱՃԹՆ Ստանդարտի ներդրման առաջին վավերացման բարձր արդյունքների գրանցմամբ, իսկ մյուս կողմից, COVID-19 համավարակի և պատերազմական գործողությունների պատճառով երկրում հայտարարված, սկզբում արտակարգ, այնուհետ նաև՝ ռազմական դրության պայմաններում ԱՃԹՆ-ի անխափան և շարունակական գործունեության իրողությամբ:

2020թ. հուլիսի 9-ին ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի կողմից կայացվեց որոշում, համաձայն որի՝ Հայաստանի առաջին վավերացման եզրակացության արդյունքում, Հայաստանը ամենաբարձր՝ բավարարող (satisfactory), առաջընթաց գրանցեց ԱՃԹՆ-ի 2016 ստանդարտի իրականացման գործում: Այդպիսով Հայաստանը դարձավ ԱՃԹՆ-ի անդամ 55 երկրների[1] մեջ 9-րդը, որին շնորհվել է բավարարող առաջընթաց ունեցող երկրի կարգավիճակ:

2020թ. սեպտեմբերի 14-ին կայացած առցանց համաժողովին հանրությանը ներկայացվեց Հայաստանի ԱՃԹՆ-ի երկրորդ՝ 2018թ.-ի ազգային զեկույցը, որը, ոչ միայն ցուցադրեց մետաղական հանքարդյունաբերության ներդրման չափը Հայաստանի տնտեսության մեջ, այլ նաև ներկայացրեց ոլորտը՝ թափանցիկ և հաշվետվողական եղանակով:

Ապահովելով ԱՃԹՆ ստանդարտի 2.5-րդ պահանջը՝ 2020 թվականը նշանավորվեց նաև ոլորտի ընկերությունների կողմից ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրերի ներկայացման մեկնարկով: Հայտարարագրերը հանրությանը հասանելի դարձան Ռեգիստրի https://www.e-register.am/ կայքում՝ pdf ձևաչափով: Իսկ տարվա վերջին ավարտված իրական սեփականատերերի հայտարարագրման էլեկտրոնային համակարգի[2] ստեղծման աշխատանքները թույլ տվեցին վերը նշված հայտարարագրերն արդեն 2021 թվականից ներկայացնել առցանց եղանակով, ընդ որում, յուրաքանչյուր շահագրգիռ անձ հայտարարագրերը կարող է դիտել, արտահանել և օգտագործել բաց տվյալների ձևաչափով: Թափանցիկության աճի այս նոր աստիճանը հնարավորություն կընձեռի հանրությանը վերահսկել և հնարավորինս կառավարել կոռուպցիոն ռիսկերը:

Նշված հաջողությունները, ինչպես նաև 2019-2020թթ. աշխատանքային ծրագրով նախատեսված մնացած աշխատանքների իրականացումը հնարավոր չէին լինի առանց միջազգային գործընկերների աջակցության, և հատկապես, Համաշխարհային բանկի

[1] 2020թ.հուլիսի դրությամբ:

[2] https://bo.e-register.am/en/auth

«Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն» դրամաշնորհային ծրագրի, որի գործողության ժամկետը մինչև 2021թ. հուլիսի 31-ը երկարաձգելու վերաբերյալ 2020թ.-ի վերջում սկսված բանակցությունները նույնպես հաջողությամբ պսակվեցին և ապահովեցին COVID-19 համավարակի և պատերազմական գործողությունների պատճառով դանդաղած աշխատանքների պատշաճ իրականացումը:

Այսպիսով, Հայաստանի Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը ևս մեկ անգամ հավաստեց իր կայուն և առաջանցիկ բնույթը և, չնայած դժվարություններով լի ոչ ստանդարտ տարվան, շարունակեց իր բնականոն և հետագա զարգացմանը միտված գործունեությունը:

1. Տարեկան կատարողականի նկարագիրը

Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի 2020թ. աշխատանքային ծրագրի կատարողական մանրամասները շարունակաբար ներկայացվել են ԱՃԹՆ ներդրման աշխատանքների եռամսյակային հաշվետվություններում, որոնք հասանելի են Հայաստանի ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքում[3]:

Ստորև ավելի մանրամասն անդրադարձ է կատարվում ԱՃԹՆ-ի 2020թ.-ի գործունեության հիմնական արդյունքներին:

Հայաստանի առաջին վավերացման արդյունքները

2020թ. ապրիլի 9-ին ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից տրամադրվեց Հայաստանի վավերացման նախնական գնահատականը և Անկախ վավերացնողի վավերացման հաշվետվության նախագիծը: Համաձայն նախնական գնահատականի՝ Հայաստանը ԱՃԹՆ-ի ստանդարտի 24 պահանջներից 22-ի մասով գրանցել էր բարձր առաջընթաց (18 պահանջի մասով բավարարող (satisfactory) և 4 պահանջի մասով՝ գրազանցող (beyond) գնահատական): Սակայն 2 պահանջի՝ 5.2-րդ (Բնապահպանական և առողջապահական նպատակային ծրագրեր) և 6.1-ին (Ընդերքօգտագործման պայմանագրերով պարտադիր սահմանված սոցիալ տնտեսական պարտավորություններ)

[3] Հայաստանի ԱՃԹՆ-ի տարեկան և եռամսյակային հաշվետվություններ https://www.eiti.am/hy/%D4%B5%D5%BC%D5%A1%D5%B4%D5%BD%D5%B5%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%BF%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80?page=1

պահանջների մասով գրանցվել էին թերություններ: Թերությունները վերացնելու համար երկրին առաջադրվել էր 2 ուղղիչ գործողություն:

Ուղղիչ գործողություններն իրականացվեցին COVID-19 համավարակի պատճառով Հայաստանում սահմանված արտակարգ իրավիճակի պայմաններում: Հարկ է ընգծել, որ այդ պայմաններում Հայաստանի ԲՇԽ-ն և ազգային քարտուղարությունը լիազոր պետական մարմինների ու համայնքների, ինչպես նաև ընդերքօգտագործող ընկերությունների հետ միասին կատարեցին ինտենսիվ ու ծավալուն աշխատանք՝ պահանջվող լրացուցիչ տեղեկատվության հավաքագրման, մեկնաբանման և հրապարակման ուղղությամբ: ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարությունը սահմանված ժամկետում ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն ներկայացրեց ուղղիչ գործողությունների գծով լրացուցիչ հավաքագրված ու հրապարակված տեղեկատվությունը ամփոփող փաստաթուղթը[4], որով Հայաստանի ԲՇԽ-ն հայտնում էր, որ իրականացված գործողությունների արդյունքում ինքը «բավարարող» է դիտարկում Հայաստանում ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջների ներդրման առաջընթացը և խնդրում է վերանայել վավերացման արդյունքները 2 պահանջների մասով: Այդ նյութերը հասանելի են Հայաստանի ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքում[5]:

Արդյունքում, 2020թ. հուլիսի 9-ին ԱՃԹՆ-ի միջազգային խորհուրդը կայացրեց որոշում[6], համաձայն որի՝ Հայաստանի վավերացման արդյունքում երկիրը ամենաբարձր՝ բավարարող (satisfactory) առաջընթաց է արձանագրել ԱՃԹՆ-ի 2016 ստանդարտի իրականացման գործում:

Վավերացման գնահատականով՝ 20 պահանջների գծով Հայաստանը գրանցել է բարձր՝ satisfactory գնահատական, իսկ 4-ի մասով գերազանցող՝ beyond գնահատական[7]: Հայաստանը գերազանցող առաջընթաց է արձանագրել ԱՃԹՆ-ի ստանդարտի 1.5-րդ (աշխատանքային ծրագիր), 2.1-ին (իրավական դաշտ), 4.1-ին (համակողմանիություն) և 6.3-րդ (տնտեսության մեջ արդյունահանող ոլորտի մասնաբաժինը) պահանջների կատարման համար: Այդպիսով, Հայաստանը դարձավ ԱՃԹՆ-ի անդամ 55[8] երկրների մեջ 9-րդը, որին շնորհվեց բավարարող առաջընթաց ունեցող երկրի կարգավիճակ:

Համաձայն Խորհրդի որոշման՝ Հայաստանի հաջորդ վավերացումը կմեկնարկի երեք տարի հետո՝ 2023 թվականի հուլիսի 9-ին, իսկ ԱՃԹՆ-ի ստանդարտի (2.5) իրական սեփականատերերի բացահայտման պահանջի կատարման վավերացումը՝ 2021 թվականին[9]:

---

[4] https://eiti.org/document/armenia-validation-2019

[5] https://www.eiti.am/en/annual-reports/2018/

[6]https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2020/03/26/beneficial-owners-data-subject-to-publication/83/
https://eiti.org/board-decision/2020-39?fbclid=IwAR2vEI_YrpZexFLFouZSdMQklHbr6qOIMuXQK0LNKkt9I3z6hjqmgD_YmZQ

[7]https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2020/07/16/eiti-validation-armenia-arm/88/

[8] 2021թ. հունիսի դրությամբ:

[9] Սույն հաշվետվությունը կազմելու՝ 2021թ. հունիսի դրությամբ ԱՃԹՆ-ի միջազգային խորհուրդը ԱՃԹՆ-ի ստանդարտի 2.5-րդ՝ իրական սեփականատերերի բացահայտման պահանջի մասով Հայաստանի 1-ին փուլի վավերացման արդյունքներով

Վավերացման արդյունքները գնահատելիս ԱՃԹՆ-ի միջազգային Խորհուրդը իր գոհունակությունն է հայտնել ՀՀ կառավարության և ԲՇԽ-ի՝ ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման գործում օրինակելի առաջընթացի և ազգային կարևորության խնդիրներ քննարկելու, ԱՃԹՆ-ի շրջանակը ընդլայնելու ուղղությամբ երկրի իրականացրած ջանքերի համար: Խորհուրդը նշել է, որ ԱՃԹՆ-ի գործընթացը հստակորեն ամրագրված է Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության և բարեփոխումների օրակարգում: Ավելին, ԱՃԹՆ-ն նպաստել է երկրում երկխոսության նոր մշակույթի ձևավորմանը՝ մասնակցելով հանքարդյունաբերության ոլորտի բարեփոխումներին և խրախուսելով տարբեր խմբակցությունների միջև համագործակցությունը:

ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության Հայաստանի վավերացման նախնական գնահատականի զեկույցում[10] ներկայացված են ԱՃԹՆ-ի ստանդարտի յուրաքանչյուր պահանջի գծով Հայաստանի կատարողականի ամրապնդման համար ռազմավարական առաջարկություններ, որոնք ընդունելի են Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից և հաշվի կառնվեն առաջիկա տարիներին ԱՃԹՆ-ի իրականացման աշխատանքներում:

ԱՃԹՆ-ի երկրորդ՝ 2018թ.-ի ազգային զեկույցի հրապարակումը և Հայաստանի ԱՃԹՆ-ի 2-րդ տարեկան համաժողովը

Հայաստանի ԱՃԹՆ-ի 2018 թվականը ներկայացնող ազգային զեկույցի կազմումը իրականացվեց Համաշխարհային բանկի «Աջակցություն Հայաստանի ԱՃԹՆ-ին» դրամաշնորհային ծրագրի շրջանակում: Երկրորդ ազգային զեկույցը՝ առաջինի պես, կազմեց «Էրնսթ ընդ Յանգ» (EY) աուդիտորական ընկերությունը, որը զեկույցի կազմման աշխատանքները սկսել էր 2019թ. վերջում:

Զեկույցի հիմնական մասի մշակման աշխատանքները համընկան երկրում COVID-19 համաճարակով պայմանավորված արտակարգ դրության ռեժիմ սահմանելու հետ, որն ինքնաբերաբար առաջացրեց նոր, ոչ այնքան հարմարավետ աշխատանքային պայմաններ: Այդ հանգամանքով պայմանավորված՝ «Էրնսթ ընդ Յանգ» ընկերությունը ստիպված եղավ խնդրել երկարաձգել կնքված պայմանագրի կատարման ժամկետը: Զեկույցը պատրաստելու պայմանագրի, ինչպես նաև դրա պաշտոնական ներկայացման ժամկետը երկարաձգվեց մինչև 2020թ.-ի 3-րդ եռամսյակ:

համաձայնեց, որ Հայաստանը գրանցել է ամենաբարձր՝ «բավարարող առաջընթաց» https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2021/06/10/armenia-eiti-satisfactory-progress-in-beneficial-ownership-disclosures/106/ https://eiti.org/board-decision/2021-32

[10] անգլերեն https://eiti.org/system/files/documents/armenia_validation_2019_initial_assessment_march_2020.pdf , հայերեն https://eiti.org/system/files/documents/arm_armenia_validation_2019_initial_assessment_march_2020.pdf

2020թ.-ի հունիսի վերջում EY ընկերության կողմից ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարություն ներկայացվեց Հայաստանի ԱՃԹՆ-ի 2-րդ՝ 2018 հաշվետու տարվա զեկույցի նախագիծը, որը տրամադրվեց ԲՇԽ-ի անդամներին, լիազոր պետական մարմիններին, ինչպես նաև ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությանը՝ վերջնական կարծիքի համար: 2020թ. սեպտեմբերի 11-ին Հայաստանի ԱՃԹՆ-ի Բազմաշահառու խումբը հաստատեց Հայաստանի ԱՃԹՆ-ի 2018թ.-ի ազգային զեկույցը[11]:

2020թ. սեպտեմբերի 14-ին կայացավ Հայաստանի ԱՃԹՆ-ի ազգային զեկույցի ներկայացման առցանց համաժողովը[12] ՀՀ կառավարության, հանքարդյունահանող կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության, Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) միջազգային քարտուղարության, միջազգային գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Համաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ փոխվարչապետ, ԲՇԽ-ի նախագահ Տիգրան Ավինյանը, որն իր խոսքում ընդգծեց, թե ՀՀ կառավարությունը և ԲՇԽ-ն շարունակելու են իրենց ջանքերը՝ ձեռք բերված հաջողությունները պահպանելու և նախաձեռնության հետագա ազդեցությունը մեծացնելու ուղղությամբ:

Հայաստանյան ԱՃԹՆ-ի գործընթացների դինամիկայի, ձեռք բերված հաջողությունների և հետագա համագործակցության վերաբերյալ ելույթներ ունեցան ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության տնօրեն Մարկ Ռոբինսոնը, Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի տնօրեն Սիլվի Բոսուտրոն, ԱՄՆ ՄԶԳ-ի հայաստանյան առաքելության տնօրեն Դեբորա Գրիզերը: Այնուհետ, EY ընկերության մասնագետները համառոտ ներկայացրեցին ԱՃԹՆ-ի 2019թ. ստանդարտի պահանջներին համապատասխան մշակված զեկույցը, Հայաստանի մետաղական հանքարդյունահանման ոլորտի նկարագիրը, զեկույցի արդյունքները և առաջարկությունները: ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության երկրի համակարգող Օլեսիա Տոլոչկոն ներկայացրեց Հայաստանի ԱՃԹՆ-ի վավերացման գնահատականը և ԱՃԹՆ-ի առաջիկա առաջնահերթությունները: Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության ղեկավար Լուսինե Թովմասյանը ներկայացրեց, թե քաղաքացիներն ինչ տեղեկատվություն կարող են գտնել ԱՃԹՆ-ի հայաստանյան և պետական մարմինների պաշտոնական կայքերում:

Համաժողովի ավարտին Հայաստանի ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի և այլ բանախոսների մասնակցությամբ տեղի ունեցավ ԱՃԹՆ-ի և հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ քննարկում, որին մասնակցեցին Համաշխարհային Բանկի հանքարդյունաբերության հարցերով գլխավոր մասնագետ Կիրստեն Հունդը, OpenOwnership իրական սեփականատերերի գլոբալ ռեգիստրի ներկայացուցիչներ Փիթեր Լոուն և Քեյդի Արմսթրոնգը, ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի կառավարության խմբակցությունից՝

[11] https://www.eiti.am/hy/annual-reports/2020
[12] https://www.eiti.am/hy/2-online-conference-arm

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Լիլիա Շուշանյանը, Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Արթուր Մանուկյանը, քաղաքացիական հասարակության խմբակցությունից՝ «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի փորձագետ Վիկտորյա Բուռնազյանը:

Լայն հանրության համար Հայաստանի ԱՃԹՆ-ի 2018թ. ազգային զեկույցի հայերեն և անգլերեն[13] տարբերակները, զեկույցի սեղմագիրը հասանելի են Հայաստանի ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքում[14]: Հայաստանի ԱՃԹՆ-ի 2018թ. զեկույցը հրապարակվել է նաև ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կայքում[15]:

Ցանկացած շահառուի համար Հայաստանի մետաղական հանքարդյունաբերության ոլորտի 2018 թվականի թվային տվյալները և ընդերքօգտագործող ընկերությունների և պետական մարմինների կողմից ներկայացված հրապարակային հաշվետվությունները հասանելի են reports.eiti.am առցանց հաշվետվությունների հարթակում: Այդ հարթակում հասանելի են նաև 2019թ.-ի ԱՃԹՆ-ի հաշվետվությունները, որոնք 2020թ.-ին ներկայացրել են պետական հաշվետու մարմինները (ՇՄՆ, ՏԿԵՆ, ՊԵԿ)՝ յուրաքանչյուրը թվով 26-ական, և ընդերքօգտագործող ընկերությունները՝ թվով 24 հատ:

Իրական սեփականատերերի բացահայտում

Դեռևս 2017թ.-ից սկսված իրական սեփականատերերի բացահայտմանն ուղղված իրավաստեղծ գործընթացը շարունակվեց նաև 2020թ.-ին:

ՀՀ արդարադատության նախարարի 2020 թվականի փետրվարի 5-ի «Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրի ձևը, լրացման և ներկայացման կարգը հաստատելու մասին» N 36 հրամանը[16], ինչպես նաև ՀՀ կառավարության 26.03.2020թ.-ին ընդունած «Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրում ներառված՝ հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը սահմանելու մասին» որոշումը[17] հանդիսացան իրական սեփականատերերի բացահայտման ներկա փուլի այն որոշիչ իրավական ակտերը, որոնք հնարավոր դարձրեցին իրական սեփականատերերի մասին

[13] https://www.eiti.am/en/annual-reports/2020/
[14] https://www.eiti.am/hy/annual-reports/2020
[15] https://eiti.org/armenia
[16] https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2020/02/11/BO-register/81/
[17] https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2020/03/26/beneficial-owners-data-subject-to-publication/83/

սահմանված տեղեկատվությունը պարունակող հայտարարագրերի հրապարակումը և լայն հանրության համար դրանց բացահայտումը:

Նշված իրավական ակտերի ընդունումից հետո, համաձայն «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի, իրական սեփականատիրոջ բացահայտման պարտականություն ունեցող իրավաբանական անձինք՝ մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման և մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունք ունեցող կազմակերպությունները, ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստր են ներկայացրել իրենց կազմակերպության իրական սեփականատերերի (ԻՍ) վերաբերյալ հայտարարագրերը:

Մինչ իրական սեփականատերերի հայտարարագրման էլեկտրոնային համակարգի գործարկումը՝ որոշում կայացվեց ռեգիստրի www.e-register.am կայքում հանրության համար անվճար հասանելիությամբ հրապարակել դրանց լուսածրված (սկանավորված) PDF ձևաչափի տարբերակը՝ հաշվի առնելով հայտարարագրերում առկա անձը հաստատող փաստաթղթի, հանրային ծառայության համարանիշի, հաշվառման և բնակության հասցեի տվյալների հրապարակման վերաբերյալ օրենքով սահմանված սահմանափակումները:

2020թ. փետրվարի 20-ից ներկայացված ԻՍ-ի վերաբերյալ հայտարարագրերը հանրության համար հասանելի են[18] www.e-register.am կայքում:

Մինչև ընկերությունների կողմից հայտարարագրերի ներկայացումը իրականացվել է ԻՍ հայտարարագրերի լրացման և ներկայացման վերաբերյալ շարունակական ուսուցում: Այդ առումով կարևոր էր ԻՍ հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեցող մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների ներկայացուցիչների հետ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում 2020թ.-ի հունվարի 29-ին կայացած հանդիպումը[19], որի ընթացքում վերջիններիս մանրամասն ներկայացվեցին ԻՍ հայտարարագրի ներկայացման կարգը, ժամանակացույցը, պահանջվող տեղեկությունների շրջանակը, հայտարարագրի լրացման ձևը, ինչպես նաև պարզաբանվեցին բոլոր ծագող հարցերը:

Հանդիպումից հետո, ողջ տարվա ընթացքում ընկերությունները, ըստ անհրաժեշտության, Արդարատության նախարարության, պետական ռեգիստրի գործակալության, ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության, ինչպես նաև ՏԿԵՆ-ի կողմից պարբերաբար ստացել են անհրաժեշտ խորհրդատվություն՝ հայտարարագրերի լրացման ձևի և ներկայացման կարգի վերաբերյալ:

---

[18] https://www.eiti.am/hy/%D4%BB%D5%8D-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%A1%D5%A3%D5%A5%D6%80/?tab=88

[19] http://mtad.am/hy/news/item/2020/01/29/mtad29.01/

2020թ.-ի ընթացքում ԻՍ-ի վերաբերյալ հայտարարագրերի թղթային տարբերակով ներկայացմանը զուգահեռ ընթացել են ԻՍ-ների հայտարարագրման էլեկտրոնային հարթակի և ԻՍ տվյալների ռեգիստրի ծրագրային ապահովման ստեղծման աշխատանքները, որոնք հետաձգվել էին 2019թ.-ին ԲՇԽ-ի կողմից համապատասխան տեխնիկական առաջադրանքի հաստատումը երկարաձգելու, և, դրա հետևանքով, ծառայության գնման գործընթացը դանդաղելու պատճառով: Արդյունքում, հանրային ռեգիստրի ծրագրային ապահովման համար ծառայությունների գնման գործընթացը կայացավ 2020թ.-ի առաջին եռամսյակում: Գնման մրցույթում հաղթող ճանաչվեց VXSoft ընկերությունը, որի հետ 2020 թվականի մայիսի 12-ին կնքվեց պայմանագիր և մեկնարկեցին ԻՍ-ի ռեգիստրի ծրագրային ապահովման ստեղծման աշխատանքները: Այդ աշխատանքները նույնպես իրականացվեցին Համաշխարհային բանկի «Աջակցություն Հայաստանի ԱՃՐԹՆ-ին» դրամաշնորհային ծրագրի շրջանակում:

Ռեգիստրի ծրագրային ապահովման ստեղծման աշխատանքներին զգալիորեն նպաստել են դրա մշակման ընթացքում պատվիրատուի՝ ԱՃՐԹՆ-ի հայաստանյան քարտուղարության, Արդարադատության նախարարության և ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խմբի, VXSoft ընկերության և OpenOwnership գլոբալ ռեգիստրի պատասխանատուների ակտիվ համագործակցությունը, շարունակական տեսազանգերը, որոնց ընթացքում քննարկվել են ԻՍ ռեգիստրի ծրագրային ապահովման մի շարք տեխնիկական հարցեր՝ կապված առցանց հայտարարագրերի կառուցվածքի, տվյալների ստուգման, ԻՍ հայտարարագրերի ներկայացման և հրապարակման գործընթացների, տվյալների դաշտերի նույնականացման, բաց ձևաչափերով տվյալների հասանելիության, իրական սեփականության շղթաների գրաֆիկական ներկայացման լուծումների և այլնի հետ:

VXSoft ընկերությունը 2020թ. դեկտեմբեր ամսին ավարտին հասցրեց ԻՍ առցանց ռեգիստրի մշակման աշխատանքները: 2020թ. դեկտեմբերի սկզբին կայացավ իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի երկօրյա հեռահար ներկայացում-ուսուցումը, որին մասնակցեցին VXSoft ընկերությունը, Հայաստանի ԱՃՐԹՆ-ի ԲՇԽ–ի անդամներ, հայաստանյան քարտուղարության աշխատակիցները, լիազոր պետական մարմինների և ընդերքօգտագործող ընկերությունների ներկայացուցիչները: Ուսուցման ընթացքում մասնակիցները կատարեցին էլեկտրոնային հարթակի ինքնուրույն թեսթավորում, գնահատեցին դրա աշխատանքի սկզբունքները և արձանագրեցին առկա խնդիրներն ու իրենց առաջարկությունները, որոնք քննարկվեցին ուսուցման երկրորդ օրը:

Արձանագրված տեխնիկական հարցերը VXSoft ընկերության մասնագետների կողմից շտկվել են մինչև հանրային ռեգիստրի պաշտոնական գործարկումը՝ 2021թ. փետրվարը: 2021թ.-ին ռեգիստրի պաշտոնական գործարկումից հետո կկայանա դրա հանրային ներկայացումը:

ԻՍ-ի բացահայտման ողջ գործընթացում առանձնակի գնահատականի է արժանի համագործակցությունը OpenOwnership գլոբալ ռեգիստրի պատասխանատուների հետ, որը

շարունակվել է նաև ողջ 2020 թվականի ընթացքում: 2020 թվականի մարտի 2-4-ը աշխատանքային այցով Հայաստանում գտնվող OpenOwnership կազմակերպության Հայաստանի ծրագրի կառավարիչ Փիթեր Լոուն հանդիպումներ ունեցավ ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարություն, Արդարադատության նախարարության, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության ներկայացուցիչների հետ, քննարկվեցին իրական սեփականատերերի մասին տվյալների համապատասխանության, հայտարարագրի բովանդակության, կառուցվածքի, ծրագրային լուծումների, միջազգային ռեգիստրների հետ փոխգործելության հետ կապված հարցեր:

OpenOwnership կազմակերպությունը օգոստոսին հրապարակեց Հայաստանի Հանրապետությունում իրական սեփականատերերի բացահայտման գործընթացի վերլուծական զեկույցը[20], որում ներկայացված էր Հայաստանի առաջընթացը իրական սեփականատերերի բացահայտման գործում և ներկայացված էին մի շարք տեխնիկական առաջարկություններ, որոնք օգտակար էին առցանց ռեգիստրի մշակման ժամանակ բաց տվյալների ստանդարտի, հավաքագրվող տվյալների ավտոմատ ստուգման և հավաստիացման մեխանիզմների կիրառման համար: Ուսումնասիրության հրապարակման անդրադարձ-հոդվածում[21] նշվում էր, որ Հայաստանում իրական սեփականատերերի բացահայտման առաջխաղացումն ընթանում է գովելի և արագ տեմպով, որը պայմանավորված է հետևյալ գործոններով՝

- ✓ կառավարության որդեգրած հակակոռուպցիոն օրակարգով, որի ներքո առանձնակի կարևորվել է հանքարդյունաբերության ոլորտի սեփականության թափանցիկության հարցը,
- ✓ հանքարդյունաբերության ոլորտի նկատմամբ հասարակական կազմակերպությունների, այդ թվում, բնապահպանների ընդգծված ուշադրությամբ և իրականացված վերլուծական բացահայտումներով,
- ✓ ընդերքօգտագործող ընկերությունների՝ ԻՍ-ին վերաբերվող պահանջվող տեղեկատվությունը բացահայտելու պատրաստակամությամբ:

OpenOwnership իրական սեփականատերերի գլոբալ ռեգիստրի ներկայացուցիչներ Փիթեր Լոուն և Քեյդի Արմսթրոնգը ելույթ ունեցան նաև Հայաստանի 2-րդ ԱՃԹՆ-ի զեկույցի ներկայացման առցանց համաժողովին և ներկայացրեցին իրականացվող աշխատանքները[22], կազմակերպության կողմից հրապարակված վերլուծական ուսումնասիրությունը, ինչպես նաև Հայաստանի առաջընթացը բաց տվյալների ստանդարտին համապատասխանող ԻՍ առցանց ռեգիստր մշակելու գործում:

---

[20] https://www.openownership.org/uploads/armenia-scoping-report.pdf
[21] https://www.openownership.org/blogs/armenia-breaks-new-ground-with-extractives-disclosures/?fbclid=IwAR2wMmeVWEVIBinAwsFguVq00PTqFGWfX5NptdYX_ixBpzbvGRJZILXLhkc
[22] https://www.eiti.am/hy/2-online-conference-arm/part-12-openownership-arm/44/

ԻՍ հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեցող մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից ԻՍ հայտարարագրերի ներկայացման 2020թ.-ի առաջին փորձը տարվա ընթացքում ուսումնասիրվում էր տարբեր շահառուների կողմից, վեր հանվում գործընթացի իրավական և ընթացակարգային թույլ կողմերը, մշակվում առաջարկություններ՝ դրանք վերացնելու համար: Այդ ենթատեքստում, հունիսի 5-ին ԱՃԹՆ ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության կողմից ներկայացվեց հայտարարություն[23], որտեղ ներկայացված էին խմբակցության առաջարկություններն իրական սեփականատերերի թափանցիկության ապահովմանն առնչվող խնդիրների լուծման ուղղությամբ:

Վերը նշված ընդհանուր դիտարկումների հիման վրա, ինչպես նաև Հայաստանի Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ/OGP) 4-րդ գործողությունների ծրագրի[24] հանձնառության կատարման շրջանակում ՀՀ արդարադատության նախարարությունը նախաձեռնեց պետական ռեգիստրում իրավաբանական անձանց իրական շահառուների (սեփականատերերի) բացահայտման համակարգի օրենսդրական բարեփոխումների գործընթաց՝ դրանում ներգրավելով նաև ՀՀ Կենտրոնական բանկի, ինչպես նաև Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության պատասխանատուներին: Այդ նախաձեռնությամբ ՀՀ կառավարությունն առաջարկում է ընդլայնել Հայաստանում իրական շահառուների բացահայտման շրջանակը՝ դա դիտարկելով որպես հակակոռուպցիոն միջոցառումների բաղադրիչ: Սահմանված ժամանակացույցով արդեն 2023 թվականի հունվարի 1-ից իրական շահառուների հայտարարագրման պահանջը կկիրառվի բոլոր իրավաբանական անձանց նկատմամբ:

Փաթեթը հանրային, ինչպես նաև ԲՇԽ-ի քննարկմանն է ներկայացվել 2020թ. 4-րդ եռամսյակում: Սպասվում է, որ 2021թ.-ի առաջին կիսամյակում այն հավանության կարժանանա ՀՀ կառավարության կողմից և կընդունվի ԱԺ-ի կողմից[25]:

Առանձնակի հարկավոր է նշել այն հանգամանքը, որ իրական շահառուների բացահայտման այսպիսի ընդլայնման համար հիմք հանդիսացան ԱՃԹՆ-ի գործընթացի ներքո մետաղական հանքարդյունաբերության ոլորտի ընկերությունների իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրերի ներդրման փորձառությունը:

Առաջարկվող փոփոխությունները ընդունվելու դեպքում որոշակիորեն կլուծվեն նաև ԱՃԹՆ-ի շահագրգիռ մասնակիցների կողմից արդեն ներկայացված ԻՍ հայտարարագրերի վերլուծությունների արդյունքում արձանագրված որոշակի բացերը և միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխանեցնելու խնդիրները:

---

[23] https://transparency.am/files/publications/1592292171-0-852077.pdf?v=4%D6%89&fbclid=IwAR1b-V4-gAHejbCpsx0GsboyosMPTKB4czL98qfsb2SwqKI176yzterb7Go

[24] https://www.ogp.am/u_files/file/OGP_AP_2018_2020_ARM.pdf

[25] Սույն հաշվետվությունը կազմելու՝ 2021թ. հունիսի դրությամբ օրենքների փաթեթը ընդունվել է ԱԺ-ի կողմից https://www.eiti.am/hy/Նորություններ/2021/06/23/Ով-է-իրական-շահառուն/108/

Իրազեկվածության միջոցառումներ

Հայաստանի ԱՃԹՆ-ի պաշտոնական www.eiti.am կայքը 2020թ.-ի ընթացքում նույնպես շարունակել է հանդիսանալ որպես տեղեկատվության տարածման հիմնական հարթակ: Տարվա ընթացքում պարբերաբար թարմացվել ու համալրվել է կայքի բաժինների բովանդակությունը, բաց տվյալների կանոններով հրապարակվել և հանրությանը հասանելի են դարձել ԱՃԹՆ-ի վերաբերյալ իրավական ակտերը, փաստաթղթերը, տեղեկություններն ու նորությունները: Օտարալեզու օգտվողների համար կայքի կարևոր տեղեկատվությունը մշտապես ներկայացվել է նաև անգլերեն լեզվով:

Ինչպես նշվել է վերևում, ԱՃԹՆ-ի կայքում տեղադրվել են Հայաստանի ԱՃԹՆ-ի 2-րդ ազգային զեկույցը, զեկույցի սեղմագիրը[26], 2018 թվականի հաստատված ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունները և Հայաստանի ԱՃԹՆ-ի ազգային զեկույցի ներկայացման առցանց համաժողովի տեսաձայնագրությունը[27]:

Բացի դրանից, շարունակաբար թարմացվել են Facebook[28] YouTube[29] և Twitter[30] ցանցերում Հայաստանի ԱՃԹՆ-ի էջերը, որոնցում հրապարակվել է ԱՃԹՆ-ի ներդրման և ոլորտի վերաբերյալ տեղեկատվություն՝ ապահովելով դրա հասանելիությունը լայն հանրության համար:

Հայաստանի ԱՃԹՆ-ի արդյունքների ու միջոցառումների վերաբերյալ հաղորդագրություններ են տեղադրվել ՀՀ փոխվարչապետ, Հայաստանի ԲՇԽ-ի նախագահ Տիգրան Ավինյանի սոցիալական ցանցերի պաշտոնական էջերում: Հայաստանում գործող լրատվամիջոցներին է տրամադրվել Հայաստանի վավերացման գնահատականի և Հայաստանի 2-րդ ԱՃԹՆ-ի զեկույցի ներկայացման առցանց համաժողովի վերաբերյալ մամլո հաղորդագրություններ, որոնց արդյունքում ապահովվել է դրանց լայն լուսաբանումը:

Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության ղեկավար Լուսինե Թովմասյանի՝ Հայաստանում գործող Մեդիամաքս լրատվական գործակալությանը տրամադրված հարցազրույցի միջոցով հանրային լայն լսարանի համար լուսաբանվել են իրական սեփականատերերի բացահայտման հարթակի ստեղծման անհրաժեշտությունը, դրա գործառույթները, հարթակի գործարկման արդյունքում լուծվող խնդիրները, հարթակից օգտվելու ձևը, շահառուները և այլն[31]:

---

[26] https://www.eiti.am/hy/annual-reports/2018/
[27] https://www.eiti.am./hy/2-online-conference-arm
[28] https://www.facebook.com/EITIArmenia/
[29] https://www.youtube.com/channel/UCx_9yOLmQCj_rwy2wYgRh6A
[30] https://twitter.com/EITI_Armenia
[31] https://mediamax.am/am/news/digitization/41415/

«Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում տպագրվել է ԱՃԹՆ-ի 2019թ. ստանդարտի հայերեն լեզվով գրքույկը:

COVID-19 համավարակով պայմանավորված՝ հաշվետու ժամանակահատվածում իրազեկման այլ հանդիպում-միջոցառումներ չեն կայացել: Շահառուների հետ տարվող հիմնական աշխատանքն իրականացվել է առցանց տարբերակով:

Կարողությունների զարգացման միջոցառումներ

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Աջակցություն գլոբալ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության իրականացմանը Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում» ծրագրի շրջանակում մարտի 6-8-ը Դիլիջանում անցկացվել է «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի ֆիսկալ ռեժիմը և ֆինանսական հոսքերի թափանցիկության ԱՃԹՆ-ի պահանջները» խորագրով դասընթաց:[32] Դասընթացը վարել են «Զեթ Քոնսալթինգ» ՓԲԸ և «Ավենյու Քոնսալթինգ Գրուպ» խորհրդատվական ընկերությունների խորհրդատուները: Դասընթացին մասնակցել են ՀՀ հաշվեքննիչ պալատի, Պետական եկամուտների կոմիտեի, Շրջակա միջավայրի նախարարության, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Ֆինանսների նախարարության, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի, Համաշխարհային բանկի, Հայաստանի ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի և քարտուղարության ներկայացուցիչներ:

Քաղաքացիական հասարակության խմբակցության կողմից իրականացված միջոցառումներ

2020 թվականին ԱՄՆ ՄԶԳ «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ծրագրի շրջանակում «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից՝ գործընկերների հետ աշխատանքի արդյունքում իրականացվել են հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի գործընթացի վերաբերյալ իրազեկման աշխատանքներ:

1. Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը մշակել է հեռավար ուսուցման առցանց

[32]https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2020/03/09/eiti-fiscal-regime-training-6-8-march-2020/82/

հարթակ,[33] որն անդրադառնում է ԱՃԹՆ ստանդարտին, հիմնական պահանջներին, հասկացություններին և ընթացակարգերին, ԱՃԹՆ բազմաշահառու խմբի (ԲՇԽ) գործառույթներին, պատասխանատու հանքարդյունաբերության հիմնական սկզբունքներին և ԱՃԹՆ վերաբերյալ մեդիա հաղորդակցության առանձնահատկություններին:

2. 2020 թվականի ընթացքում պատրաստել է 10 տեսանյութերից պատրաստված տեսաշար[34]՝ ԱՃԹՆ-ին առնչվող հարցերի շուրջ, որոնց շուրջ կազմակերպել է 5 առցանց սեմինար:
3. Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը ձեռնարկել է հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության երկխոսության գործընթաց և քննարկման ամփոփ փաստաթղթերի մշակում, որոնք վերաբերում են հանքարդյունաբերության ոլորտում աշխատանքային պայմաններին և աշխատանքային անվտանգությանը, ազդակիր համայնքների դիմակայունությանը աղետների նկատմամբ, հանքարդյունաբերության բացասական ժառանգության մեղմման հարցերին և ոլորտի պատասխանատվությանը շրջակա միջավայրի և հանրային առողջության առումով:[35]
4. Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը 2020 թվականի ընթացքում ձեռնարկել է հանքարդյունաբերության բնապահպանական և սոցիալական մոնիտորինգի ձեռնարկ՝ միտված երիտասարդների ուսուցանմանը և վերջիններիս ներգրավմանը հանքարդյունաբերության վերահսկման գործընթացներում:[36]
5. Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը ձեռնարկել է հանքարդյունաբերության վերաբերյալ տեղեկատվական առցանց հարթակ՝ նպաստելու տեղեկատվության տարածմանը, ինչպես նաև՝ հետազոտական աշխատանքների իրականացմանը:[37]
6. «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ն հաշվետու տարվա ընթացքում ուսումնասիրել է 5 չաշխատող հանքարդյունաբերական ընկերությունների պայմանագրային պարտավորությունները, դրանց չկատարման պատճառները և պատասխանատվության հետ կապված հարցերը: Արդյունքում կազմվել և հրապարակվել են «Սագամար» ՓԲԸ-ի[38], «Մուլտի գրուպ կոնցեռն» ՍՊԸ-ի[39],

[33] https://crm.aua.am/hy/elearning/eiti/
[34] https://www.youtube.com/playlist?list=PLcNfo5oEeefkG2hh3HFc9iV9KDnyLka35
[35] Փաստաթղթերը հրապարակվել են 2021 թ.-ին: Տես՝ https://crm.aua.am/hy/mpdpy/mining-policy-dialog-process
[36] Նախատեսվում է հրապարակել մինչև 2021 թ. սեպտեմբեր:
[37] Նախատեսվում է հրապարակել մինչև 2021 թ. սեպտեմբեր:
[38] https://www.ecolur.org/files/uploads/sagamarreportfinal.pdf
[39] https://www.ecolur.org/files/uploads/mghartreportfinal.pdf

«Բակտեկ էկո» ՍՊԸ-ի[40], «Ասսաթ» ՍՊԸ-ի[41], «Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ-ի[42] գործունեության վերաբերյալ հաշվետվությունները:[43]

